ՏԵՂԵԿԱՆՔ
Չինաստանի հետ «Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Չինաստանի ազգային ատոմային կորպորացիան հետաքրքրվածություն է ցուցաբերել մասնակցելու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրին և 2015թ.-ի մարտի 23-ին՝ ՀՀ Նախագահի ՉԺՀ այցի շրջանակներում, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Չինաստանի ազգային էներգետիկայի կազմակերպության միջև Պեկինում ստորագրվել է ատոմային էներգիայի ծրագրերում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առկա կապերի դիտարկման և հարաբերությունների արդյունավետության բարձրացման նպատակով 2017թ.-ի հունիսի 7-ին ՀՀ Նախագահի մոտ կայացած խորհրդակցության արդյունքում կազմված արձանագրության 5-րդ կետով հանձնարարվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանն՝ աշխատանքներ իրականացնել Չինաստանի հետ «Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» համաձայնագրի ստորագրման ուղղությամբ:

Համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա երկու երկրներին համագործակցել ատոմային էներգիայի բնագավառում և կծառայի ատոմային էներգիայի բացառապես խաղաղ նպատակներով օգտագործմանը և չի օգտագործվի միջուկային զենքի և այլ միջուկային պայթուցիկ սարքերի ստեղծման կամ որևէ այլ ռազմավարական նպատակի հասնելու համար: Համագործակցության իրականացման ընթացքում երկու երկրներն առաջնորդվելու են ՄԱԿ-ի 1968 թ. հուլիսի 1-ի «Միջուկային զենքը չտարածելու մասին» պայմանագրի սկզբունքներով և պարտավորվում են չօգտագործել փոխանցվող սարքավորումները, նյութերը և երկակի նշանակության տեխնոլոգիաները կամ նրանցից վերարտադրված ցանկացած կրկնօրինակը միջուկային պայթուցիկ սարքավորումների հետ կապված ցանկացած գործունեությունում և չվերաարտահանել այդ առարկաները երրորդ երկրներ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

Համաձայնագրով կարգավորվում են ատոմային էներգիայի բնագավառում համագործակցության ընթացքում առևտրային կապերի և երկկողմ օգնության ծրագրերի շրջանակներում իրականացվող ներմուծումների պայմանները, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և բաշխման, իրենց պետությունների տարածքով միջուկային նյութերի տարանցիկ տեղափոխումներին առնչվող հարցերը:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում Չինաստանի հետ «Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» համաձայնագրի ստորագրումը՝ ղեկավարվելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերություններով և ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության հետագա ընդլայնման անհրաժեշտությունով, և հաշվի առնելով պատասխանատվությունն իրենց ժողովուրդների և միջազգային հանրության առջև ատոմային էներգետիկայի օբյեկտների անվտանգ շահագործման ապահովման համար:

ՆԱԽԱՐԱՐ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ